ք. Երևան

Հավելված 1
ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՊԵՏԻ
2018 թվականի
մայիսի -ի N -Ա հրաման

ԿԱՐԳ
ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում են ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պատասխանատու ստորաբաժանումների կողմից Կրթահամալիրի ռազմավարական պլանի կատարման վերաբերյալ հաշվետվությանը ներկայացվող պահանջները և ներկայացման կարգը:

2. Կարգում օգտագործվող հիմնական հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը՝

1) *ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պատասխանատու ստորաբաժանում*՝ սույն կարգի 3-րդ կետով նախատեսված ստորաբաժանումները,
2) *Հաշվետու ժամանակահատված*՝ յուրաքանչյուր տարվա հունվարի մեկից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածը,
3) *Հաշվետվություն*՝ սույն կարգի 3-րդ կետով նախատեսված ստորաբաժանումների կողմից սույն կարգի 2-րդ կետի 2-րդ պարբերությամբ նշված ժամանակահատվածի վերաբերյալ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ռազմավարական պլանի կատարման վերաբերյալ հաշվետվություն:

3. Սույն կարգի իմաստով ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պատասխանատու ստորաբաժանումներն են՝
1) ՀՀ ոստիկանության կրթահամալիրի (այսուհետ՝ Կրթահամալիր) ակադեմիան,
2) Կրթահամալիրի քոլեջը,
3) Կրթահամալիրի ուսումնական կենտրոնը,
4) Կրթահամալիրի ուսումնամեթոդական և զարգացման վարչությունը,
5) Կրթահամալիրի վերապատրաստման և ատեստավորման ֆակուլտետը,
6) Կրթահամալիրի ֆինանսական բաժինը,
7) Կրթահամալիրի ծառայության բաժինը,
8) Կրթահամալիրի կադրերի բաժինը,
9) Կրթահամալիրի գիտական բաժինը,
10) Կրթահամալիրի կրթության որակի ապահովման բաժանմունքը:

4. ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ռազմավարական պլանի կատարման վերաբերյալ հաշվետվությանը ներկայացվող պահանջների և ներկայացման կարգի սահմանումը նպատակ ունի ապահովելու ռազմավարական պլանի ամբողջական կատարումը, պատասխանատու ստորաբաժանումների գործունեության թափանցիկությունը և գնահատումը, պատասխանատու ստորաբաժանումների գործունեության նկատմամբ վերհսկողության արդյունավետությունը:

5. ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ռազմավարական պլանի կատարման վերաբերյալ հաշվետվությունը բաղկացած է 4 (չորս) կետերից՝

1) Հաշվետու ժամանակահատվածում ռազմավարական պլանի գործողությունների կատարման ժամանակացույցով նախատեսված գործողության վերաբերյալ համառոտ տեղեկատվություն,

2) Հաշվետու ժամանակահատվածում ռազմավարական պլանի գործողությունների կատարման ժամանակացույցով նախատեսված քայլի նկարագիրը,

3) Հաշվետու ժամանակահատվածում ռազմավարական պլանի գործողությունների կատարման ժամանակացույցով նախատեսված քայլի իրագործման արդյունքները,

4) ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ռազմավարական պլանում և գործողությունների կատարման ժամանակացույցում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ առաջարկություններ (առկայության դեպքում):

6. «Հաշվետու ժամանակահատվածում ռազմավարական պլանի գործողությունների կատարման ժամանակացույցով նախատեսված գործողության վերաբերյալ համառոտ տեղեկատվություն» կետում նշվում է ժամանակացույցով նախատեսված քայլի անվանումը, պատասխանատու ստորաբաժանումը, քայլի իրագործման համար օգտագործված ռեսուրսները (կատարողների անունը, ազգանունը, հայրանունը, կոչումը, պաշտոնը, առկայության դեպքում՝ ֆինանսական և այլ նյութական ռեսուրսները):

7. «Հաշվետու ժամանակահատվածում ռազմավարական պլանի գործողությունների կատարման ժամանակացույցով նախատեսված քայլի նկարագիրը» կետում տրվում է քայլի ամբողջական նկարագիրը:

8. «Հաշվետու ժամանակահատվածում ռազմավարական պլանի գործողությունների կատարման ժամանակացույցով նախատեսված քայլի իրագործման արդյունքները» կետում կատարվում է նշում քայլի իրագործման արդյուքների վերաբերյալ:

9. «ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ռազմավարական պլանում և գործողությունների կատարման ժամանակացույցում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ առաջարկություններ (անհրաժեշտության դեպքում)» կետում կատարվում են նշված փաստաթղթերում փոփոխությունների և լրացումների վերաբերյալ առաջարկություններ:

10. Հաշվետվությունը պատրաստվում է թղթային տարբերակով: Անհրաժեշտության դեպքում կարող է տրվել նաև էլեկտրոնային տարբերակը:

11. Հաշվետվության ձևը լրացվում է հնարավորինս պարզ, միանշանակ ընկալվող հայերեն լեզվով, «յունիկոդ» տառատեսակով:

12. Հաշվետվությունները ստորագրվում են սույն կարգի 3-րդ կետով նախատեսված ստորաբաժանումների ղեկավարների կողմից: Վերջինիս բացկայության դեպքում հաշվետվությունը ստորագրվում է ստորաբաժանման ղեկավարի տեղակալի կողմից: Սույն կարգի 3-րդ կետով նախատեսված ստորաբաժանումների ղեկավարներն անմիջական պատասխանատվություն են կրում հաշվետությանը ներկայացվող պահանջների, ձևի, ներկայացման կարգի և սույն կարգով նախատեսված ժամկետներում ներկայացնելու համար:

13. Հաշվետվությունը ստորագրման է ներկայացվում է սույն կարգի 2-րդ կետի, 2-րդ ենթակետով սահմանված ժամանակահատվածի ավարտից ոչ ուշ քան 20, ոչ շուտ քան 30 օր առաջ:

14. Հաշվետվությունները ներկայացվում են ՀՀ ոստիկանության գիտական խորհրդի նիստում, որը գումարվում է սույն կարգի 2-րդ կետի, 2-րդ ենթակետով սահմանված ժամանակահատվածի ավարտից հետո՝ ոչ շուտ քան 20, ոչ ուշ քան 30 օրվա ընթացքում:

15. Հաշվետվությունները ներկայացվում են սույն կարգի 3-րդ կետով նախատեսված ստորաբաժանումների ղեկավարների կողմից: Վերջինիս բացկայության դեպքում

հաշվետվությունը ներկայացվում է ստորաբաժանման ղեկավարի տեղակալի կողմից:

16. Հաշվետվության վերաբերյալ որոշումը ընդունվում է գիտական խորհուրդի կողմից՝ խորհրդի նիստերին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ՝ բաց քվեարկությամբ, եթե խորհուրդը քվեարկության այլ կարգ չի սահմանում: Գիտական խորհրդի նիստերի քվեակազմը, նիստերի անցկացման ընթացակարգի հետ կապված հարցերը սահմանվում են ՀՀ ոստիկանության կրթահամալիրի գիտական խորհրդի կողմից հաստատված ՀՀ ոստիկանության կրթահամալիրի գիտական խորհրդի կանոնակարգին համապատասխան:

17. Հաշվետվության վերաբերյալ գիտական խորհրդը կարող է ընդունել հետևյալ որոշումներից մեկը՝

1) Հաշվետվությունը հաստատելու մասին որոշում,
2) Հաշվետվության հաստատումը մերժելու մասին որոշում:

18. Սույն կարգի 17-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված որոշումն ընդունելու դեպքում, համապատասխան ստորաբաժանմանը սույն կարգի ուժով տրվում է 15 օրյա ժամկետ՝ թերությունները վերացնելու համար:

19. Հաշվետվության հաստատումը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում, չհաստատված հաշվետվությունը, թերությունների վերցումից հետո, ենթակա է կրկնակի քննարկման:

20. Կրկնակի քննարկումը իրականացնելու համար գիտական խորհրդի նիստը գումարվում է սույն կարգի 18-րդ կետով սահմանված ժամկետը լրանալուց հետո 5-աշխատանքային օրվա ընթացքում:

21. Կրկնակի քննարկման ներկայացվող հաշվետությանը ներկայացվող պահանջները, ներկայացումը, քննարկումը և որոշման ընդունումը իրականացվում է ընդհանուր կարգին համապատասխան:

Հավելված 2
ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՊԵՏԻ
2018 թվականի
մայիսի -ի N -Ա հրաման

Ձև

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ռազմավարական պլանի կատարման վերաբերյալ հաշվետվություն

1. Հաշվետու ժամանակահատվածում ռազմավարական պլանի գործողությունների կատարման ժամանակացույցով նախատեսված գործողության վեաբերյալ համառոտ տեղեկատվություն

	Քայլը	Պատասխանատու ստորաբաժանումը	Անհրաժեշտ ռեսուրսներ/ մարդկային, նյութական, ֆինանսական/	Այլ նշումներ /անահրաժեշտության դեպքում/
1				
2				
3				
4				
5				
6				

2. Հաշվետու ժամանակահատվածում ռազմավարական պլանի գործողությունների կատարման ժամանակացույցով նախատեսված քայլի նկարագիրը՝

1._____

_____

2._____

_____

3._____

_____

4._____

_____

3. Հաշվետու ժամանակահատվածում ռազմավարական պլանի գործողությունների կատարման ժամանակացույցով նախատեսված քայլի իրագործման արդյունքները՝

1._____

2._____

3._____

4._____

4. ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ռազմավարական պլանում և գործողությունների կատարման ժամանակացույցով փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ առաջարկություններ (առկայության դեպքում)՝

1._____

2._____

3._____

4._____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՊԵՏԻ

Հ Ր Ա Մ Ա Ն

թիվ 106-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՊԵՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 25-Ի ԹԻՎ 295-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 9-ի «Հայաստանի Հանրապետության ոստիկանության ակադեմիա» պետական հիմնարկը վերակազմակերպելու և «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կրթահամալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 1791-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 18-րդ կետի ա ենթակետը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի 25 հունիսի 2018 թվականի թիվ 295-Ա հրամանով հաստատված հավելված 1-ում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1. Հավելված 1-ը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 3.1. կետով՝ «3.1. Պատասխանատու ստորաբաժանումների կողմից ներկայացված ռազմավարական պլանի կատարման հաշվետվությունները վերլուծելու, ամբողջական հաշվետվություն կազմելու և

գիտական խորհրդին ներկայացնելու համար ստեղծել աշխատանքային խումբ (այսուհետ՝ խումբ) հետևյալ կազմով՝

1) ուսումնամեթոդական և զարգացման վարչության պետի տեղակալ, ինքը և ուսումնական գործընթացի կազմակերպման և վերահսկման բաժնի պետ (խմբի ղեկավար),

2) կրթության որակի ապահովման բաժանմունքի պետ,

3) ավագ իրավախորհրդատու»:

2. 13-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ «13. Հաշվետվությունը խմբին է ներկայացվում հաշվետու ժամանակահատվածի ավարտից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում»:

3. 14-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ «14. Խումբը, վերլուծելով պատասխանատու ստորաբաժանումների կողմից ներկայացված հաշվետվությունները, սույն կարգի 13-րդ կետում նշված ժամկետի ավարտից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում գիտական խորհրդի քննարկմանն է ներկայացնում ամբողջական հաշվետվությունը»:

4. Հրամանը ծանոթացնել իրեն վերաբերող մասով:

ՊԵՏ,
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ **Մ. ԲԱԲԱՅԱՆ**

«27» 02 2019թ.
ք. Երևան